

քսանութը մարտի 2013 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի՝ պետական բազային ֆինանսավորմամբ գործելու պարագայում ԵՊՀ պատմության ֆակուլտետում համալսարանի ֆինանսավորմամբ հնագիտության լաբորատորիայի գործունեության աննպատակահարմարությունը և ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 2-րդ մասով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ մասով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Լուծարել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնին կից գործող հնագիտության լաբորատորիան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ